

արք. Արարացի): Մարտիրոս պարք կը յիշատակուի նաև (ՄՁ. Թ. 27) Յայնսաւորի մը յիշատակարանին մէջ իբր եպս. և ծաղկող նոյն ձեռագիրին. (Խապ. Ցուց էջ 131):

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԵ. ՔէֆէցԻ ԿԱՄ ՂՐԻՄՅԻ.— Թարսար մականունը կը տրուէր Քէֆէցի ըլլալուն համար. կը կարգուի հովիւ Քէֆէի 1658 ին (ՄՁ. Թ. 430). նոյն տարին Քէֆէէ կը մեկնի և կուգայ Պոլիս, ուր Այնթէպցի եղիազար եպս. ին յանձնարարութեամբ կ'ընտրուի ՊԿ. (1659-60), (տե՛ս իր ինքնագիր յիշատակարանը ՄՁ. Թ. 450), յետոյ կը հրաժարի եւ կը մեկնի Քէֆէ. Մարտիրոս պարք. ի մասին՝ ՄՁ. Թ. 438 ձեռագիրին մէջ՝ ուր Կ. Պոլսի պատրիարքաց զաւաղանը դրուած է, ունի հետեւեալ ծանօթութիւնը.

«Մարտիրոս վրդ. Քէֆէցի, զոր յիշէին ի պատարագին ի սբ. Ածածին եկեղեցին մինչ յապրիլն, որոյ ի մեծ հանդուսին պատճառ եղեալ էր պատմանն բազում փողս մսխելով ողորմութեամբ այ.»: Եպս. կը ձեռնադրուի 1660 ին Քէֆէի եկեղեցոյն համար: Յետոյ կուգայ Երուսաղէմ, իբր օգնական Աստուածատուր պարք. ի. 1671 ին Հալէպցի լատինացեալ Զէմէրիէ Զէլէպիին մէկ նամակէն կը հասկցուի որ նոյն ատենները Յըրանսայէն եկած էին լուտերականներ ու կալուինականներ եւ բողոքականութիւն կը քարոզէին Հալէպի մէջ. Մարտիրոս Ս. Յակոբի վանքին մէջ մասնաւոր ժողով մը կը գումարէ միաբաններէն եւ կը հերքէ այդ բողոքականներու մոլար վարդապետութիւնը և նոյն թուական կոնդակով մը կ'իմացնէ Զէմէրիէ Զէլէպիին: Զերմ հակառակորդ հանգիստացաւ եղիազար Այնթապցիի հակաթոռ կաթողիկոսութեան, ու այդ պատճառաւ Առաջնորդ Երուսաղէմի տիտղոսով Պոլիս հաստատուելով, յանուն Ս. Յակոբի դրամ կը հաւաքէր ու գործերը կը վարէր (1675-76), իրեն հակառակորդ ունենալով հանդերձ օրուան ՊԿ. Անդրէաս Երէցը: Մարտիրոս Քէֆէցիին և եղիազար Այնթապցիի ներձակ ձեռնարկներու մանրամասնութիւնները տեսնել (ձպե. Ա. հատ. էջ 355-404): 1682 ին եղիազար Այնթապցիին ամենայն Հայոց կթղ. ընտրուելով՝ Մարտիրոս Քէֆէցիին կարգուեցաւ ՊԵ: Ըստ Օրացորտեան Մինաս Ամդեցիին՝ Ս. Տեղեաց խնդիրներուն համար 1682 ին Պոլիս կ'երթայ և Երեմիա Զէլէպիի միջնորդութեամբ իրաւախօն կ'ըլլայ: Վերադարձին եղիպտոս կը